

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՍ
ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ., պրոֆեսոր
_____ Գ.Կ. Խաչատրյան
“ 30” __04__ 2010թ.

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» Պետական ոչ առևտրային կազմակերպության
Կրթության որակի ապահովման կենտրոնի**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում
(արձանագր. թիվ _4__ “_30__ “_____04_____ 2010թ.)

1. Ներածություն

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» Պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) կարևոր նպատակներից մեկը բոլոր մակարդակի կրթական ծրագրերի բարձր որակի ապահովումն է: Գիտակցելով, որ դասավանդման որակը կապված է դասախոսների գիտական գործունեության հետ, ինստիտուտը ձգտում է զարգացնել գիտական հետազոտությունները կրթական գործունեության բոլոր ուղղություններով: Ինստիտուտն իրականացնում է ներքին քաղաքականություն՝ ուղղված նրան, որպեսզի շնորհները, վկայականները և կրթության վերաբերյալ ինստիտուտի կողմից տրվող այլ փաստաթղթերը բարձր գնահատվեն գործատուի կողմից:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար ինստիտուտն օգտագործում է որակի ապահովման համակարգ, որը հիմնված է բուհերի համար ավանդական դարձած որակի վերահսկման տարրերի և Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի կողմից մշակված չափորոշիչների ու երաշխավորագրերի համադրության վրա:

2. Կենտրոնի գործունեության հիմնական սկզբունքներն ու ռազմավարությունը

Ինստիտուտի որակի ապահովման համակարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

2.1. Ինստիտուտը պատասխանատվություն է կրում իր կողմից տրամադրվող կրթության որակի համար:

2.2. Ինստիտուտը երաշխավորում է պետական կրթական չափորոշիչների բոլոր պահանջների կատարումը և այն կրթական ծրագրերի պահանջների իրականացումը, որոնց համար դրանք մշակվել են:

2.3. Ինստիտուտն իր բոլոր ուսանողներին տրամադրում է անհրաժեշտ պայմաններ պետական և ներքին կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծրագրերի յուրացման համար, ներառյալ որակավորված պրոֆեսորադասախոսական կազմ, գրադարանային և տեղեկատվական սպասարկում, սոցիալական աջակցություն:

2.4. Ինստիտուտն իր վրա է վերցնում պատասխանատվությունը՝ իրականացնելու կրթության որակի շարունակական ապահովում որակի ապահովման մոնիթորինգի և

այդ մակարդակի բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացման միջոցով:

2.5. Ինստիտուտում կրթության որակի ապահովման գործընթացը համապատասխանում է այն պահանջներն և սկզբունքներին, որոնք ձևակերպված են ENQA –ի կողմից մշակված «Եվրոպայի տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների համար ստեղծված չափորոշիչներ և ուղղորդիչներ» փաստաթղթում:

2.6. Որակի ապահովման և ներքին չափորոշիչների ձևավորման գործընթացի բոլոր մակարդակներում ակտիվորեն ներգրավվում են ինստիտուտի ուսանողները:

2.7. Ինստիտուտի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում որակի ապահովման խնդիրներին՝ նպաստելով դասախոսների և ուսանողների մոտ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը Ինստիտուտի կողմից տրվող շնորհների, վկայականների և այլ խաստաթղթերի նկատմամբ:

3. Չափորոշիչներ: Կրթության որակի ապահովման ծրագրեր

3.1. Կրթական ծրագրերի բովանդակությունը, դրանց իրականացման պայմանների, ուսումը հաջողությամբ ավարտած անձանց պատրաստվածության մակարդակի նկատմամբ պահանջները որոշվում են համաձայն համապատասխան պետական չափորոշիչների:

3.2. Բարձրագույն կամ լրացուցիչ մասնագիտական կրթություն տրամադրելու դեպքում գործում են բարձրագույն մասնագիտական կրթության վերաբերյալ պետական կրթական չափորոշիչները:

3.3. Չափորոշիչների հիման վրա ինստիտուտը մշակում է կրթական ծրագրեր, որոնք ներառում են ուսումնական պլանները, առարկայական փաթեթները և նյութեր, որոնք ապահովում են ուսանողների պատրաստականության որակը: Կրթական ծրագրերը մշակվում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

3.4. Բարձրագույն և լրացուցիչ մասնագիտական, հետբուհական կրթության ծրագրերը անցնում են հավատագրման փորձագիտական քննություն և հավաստագրվում են Կրթության և գիտության նախարարության կողմից:

3.5. Չափորոշիչները, ուսումնական պլանները և առարկաների աշխատանքային ծրագրերը հրատարակվում են բուհի պաշտոնական կայքում:

4. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակի գնահատում

4.1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակի գնահատման գործընթացն ուղղված է պարզելու, թե որքանով են դրանք համապատասխանում կրթական ծրագրերի պահանջներին, որոնք ձևակերպված են կրթական չափորոշիչներում և առարկայական ծրագրերում:

4.2. Գիտելիքների մակարդակի գնահատումը կատարվում է քննությունների, ստուգարքների միջոցով՝ համաձայն Ինստիտուտում ընդունված և գործող կանոնակարգի:

4.3. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակի որոշումն ու մոնիթորինգն իրականացվում են Կենտրոնի կողմից: Արդյունքները զեկուցվում են ինստիտուտի գիտխորհրդում՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Ըստ ուսանողների առաջադիմության վերլուծության արդյունքների ընդունվում են կառավարչական որոշումներ:

4.4. Միջանկյալ և եզրափակիչ ատեստավորման գործընթացները կարգավորվում են ըստ գործող կանոնակարգի:

5. Պրոֆեսորադասախոսական կազմի որակի նկատմամբ վերահսկողությունը

Պրոֆեսորադասախոսական կազմի որակի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ինստիտուտում գործող կանոնակարգի համապատասխան:

6. Կրթական ռեսուրսները և ուսանողներին աջակցության համակարգը

6.1. Հիմնական կրթական ծրագրերի որակյալ յուրացման նպատակին ծառայող Ինստիտուտի նյութական ռեսուրսները հասանելի և մատչելի են ուսանողների համար: Ինստիտուտի նյութական ռեսուրսների մեջ են մտնում ուսումնական և լաբորատոր հենքը, գրադարանը, համակարգչային սենյակները, պրակտիկայի հենքը, սպորտային սարքավորումները:

6.2. Ինստիտուտը մարդկային ռեսուրսների մեջ, բացի պրոֆեսորադասախոսական անձնակազմից, մտնում են նաև այն համակարգերի աշխատողները, որոնք ցուցաբերում են սոցիալական աջակցություն ուսանողին:

6.3. Կենտրոնն վերահսկում է Ինստիտուտի կողմից ուսանողներին և աշխատակիցներին առաջարկվող սոցիալական աջակցության տրամադրման, հանգստի կամգմակերպման, առողջարարական միջոցառումների կազմակերպման արդարությունը, մշակութային-հասարակական միջոցառումներին մասնակցության մատչելիությունը:

7. Ներքին աուդիտ

7.1. Ինստիտուտի կրթական գործունեության վերահսկման համար անցկացվում է ներքին աուդիտ՝ ինքնահետազոտման միջոցով, որն ըստ ինստիտուտի գործունեության հիմնարար չափանիշների, անցկացվում է ամեն տարի՝ ուսումնական տարվա վերջին:

7.2. Ինստիտուտի կրթական գործունեության վերլուծության արդյունքները գեկուցվում են Գիտխորհրդում, տեղեկացվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ըստ վերլուծության արդյունքների կայացվում են որոշումներ:

Վերլուծության են ենթարկվում նաև հետևյալ չափանիշները.

- ուսանողների առաջադիմության մակարդակը
- շրջանավարտների պահանջարկն աշխատաշուկայում
- ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի իրականացման որակով
- դասավանդման առավել արդյունավետ մեթոդները
- ուսանողների կազմը
- ուսումնական ռեսուրսները և նյութական միջոցների օգտագործման արդյունավետությունը

8. Հասարակայնության տեղեկացում

8.1. Գործելով աշխատաշուկայում և կրթական ծառայությունների ոլորտում՝ Կենտրոնը լայնորեն հրապարակում է տեղեկատվություն իրականացվող կրթական ծրագրերի մասին, ներառյալ՝

- կանոնադրությունը, լիցենզիանգավորման և հավատարմագման վկայական իր բոլոր հավելվածներով

- պայմանները, որտեղ սովորում են ուսանողները և նրանց հասանելի կրթական ռեսուրսները
- կրթական ծրագրերի բովանդակությունը պետական կրթական չափորոշիչների և առարկայական աշխատանքային ծրագրերի տեսքով
- շրջանավարտների որակավորման և ակնկալվող արհեստավարժության մակարդակի նկատմամբ պահանջները
- միջանկյալ և եզրափակիչ ատեստավորման կարգը և ստուգողական նյութերի բովանդակությունը
- ինքնահետազոտության արդյունքները
- ինստիտուտի շրջանավարտների ձեռքբերումները:

8.2. Տեղեկատվությունը հրապարակվում է ինստիտուտի պաշտոնական կայքում, տեղական մամուլում, գրքույկներում, տեղեկատուներում՝ նախատեսված դիմորդների և գործատուների համար: